«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա » վեպի դասավանդումը
ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու և գրականություն
ՀԵՂԻՆԱԿ	Անահիտ Հովհաննիսյան
ՄԱՐԶ	Երևան
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Երևանի հ.179 հիմնական դպրոց

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____3

Գլուխ 1. Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը

1.1 Կ. Զարյանի «Նավը լեռան վրա» վեպի գաղափարը_____ 4

1.2 Բացահայտումների ճանապարհին _____ 9

1.3 Պետրոս Մարկ _____13

1.4 Արա Հերյան _____ 15

Գլուխ 2. «Նավը լեռան վրա» վեպի դասավանդման մեթոդներ _____21

Եզրակացություն _____ 24

Օգտագործված գրականության ցանկ _____ 26

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նախագծային աշխատանքի թեման 20-րդ դարի ամենաչհասկացված, ամենաշատ տարակարծությունների առիթ դարձած արձակագիր, բանաստեղծ Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպն է: Ցավալի է, բայց հայ ընթերցողը գրեթե ծանոթ չէ գրողի ստեղծագործությանը, մասնավորապես գեղարվեստական արձակին:

Թեմայի արդիականությունը

Դպրոցական ծրագրով նախատեսված է միայն Կ.Զարյանի «Նավը լեռան վրա» վեպը, որն ուսումնասիրվում է ավագ դպրոցի 12-րդ դասարանում: Անձնական ուսումնասիրություններս հանգեցրել են այն եզրակացության, որ աշակերտները դժվարությամբ են հաղթահարում նյութը: Պատճառները մի քանիսն են՝

1. Գրողի անձի և ստեղծագործության շուրջ խորհրդային գրաքննադատության կողմից ձևավորված բացասական կարծիքի կարծրատիպը մինչ այժմ պահպանվում է:
2. Կարդում են վեպի 1963 թվականի երևանյան հրատարակությունը, որը պարտադրված խմբագրման ենթարկված տարբերակ է. աղավաղված է վեպի գաղափարը, հեղինակի ոճը, խախտված է հեղինակ – ընթերցող կապը: Այսպիսի խմբագրման նպատակը բխում էր խորհրդային գաղափարախոսությունից:
3. Լինելով փիլիսոփա, թաքնագետ՝ Կոստան Զարյանը արտահայտում է մտքեր, կատարում է եզրահանգումներ, որոնք հասկանալու համար պետք է ծանոթ լինել 20-րդ դարասկզբի որոշ փիլիսոփայական աշխատանքների:

Հետազոտական աշխատանքի նպատակը

1. Ընթերցողին ծանոթացնել Կոստան Զարյան գրողին, արվեստագետին և փիլիսոփային՝ ներկայացնելով «Նավը լեռան վրա» վեպի որոշ կարևոր դրույթներ:
2. Օգնել ընկալելու և մեկնաբանելու վեպի գաղափարը:
3. Նպաստել հասկանալու և բնութագրելու որոշ կերպարներ:

4. Օգնել հասկանալու, որ այս վեպի շնորհիվ հնարավոր է պատկերացում կազմել 20-րդ դարասկզբի Հայաստանի պատմական-քաղաքական, սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

Հետազոտական աշխատանքի խնդիրները

1. Մատուցել «Նավը լեռան վրա» վեպի ուսուցման մեթոդներ:
2. Անցկացնել քննարկումներ դասի մասնակից աշակերտների կամ դասալսողների հետ:
3. Բացահայտել ընտրված մեթոդներով ուսուցման արդյունավետությունը:

Գլուխ 1. ԿՈՍՏԱՆ ԶԱՐՅԱՆԻ
«ՆԱՎԸ ԼԵՌԱՆ ՎՐԱ» ՎԵՊԻ ԳԱՂԱՓԱՐԸ

«Նաւը լերան վրայ» վեպի առաջաբանում Կոստան Զարյանն ասում է, որ այս վեպը սովորական պատմական վեպ չէ, այլ մի քանի հայ հոգիների պատմություն, որոնց վիճակվել էր ապրել մեր ազգի համար ամենաբախտորոշ ժամանակաշրջաններից մեկում: Հայ ոգու պատմությունը ներկայացնելու համար Կոստան Զարյանը անդրադարձել է մեր երկրի և ժողովրդի համար ճակատագրական ժամանակաշրջանի՝ 1918-1920 թվականներին, երբ առաջին աշխարհամարտը ավարտվում էր, բայց որոշ պետություններ դեռ շարունակում էին աշխարհը հօգուտ իրենց բաժանելու դաժան քաղաքականությունը:

Հայաստանը հայտնվել էր Թուրքիայի և Ռուսաստանի շահերի բախման կիզակետում և պատերազմում էր այդ հզոր պետությունների դեմ՝ ապրելու և լինելու իր իրավունքը պաշտպանելու համար: Մեր երկրի փոքր ու մեծ հարևաններից յուրաքանչյուրը իր շահերն ուներ, որոնք ցանկանում էր լուծել նաև մեր երկրի հաշվին: Այնպես որ Հայաստանը «դաժանորեն մենակ էր» մնացել և իր ողբերգություններից միայնակ պիտի դուրս գար:

Ճիշտ է, հեղինակը գրում է, որ իր վեպը «բուն իմաստով պատմական վէպ չէ», բայց հնարավոր չէ հեղինակի ասելիքի բուն իմաստը հասկանալ առանց պատկերացնելու 20-րդ դարասկզբի Հայաստանի պատմական-քաղաքական և սոցիալ-տնտեսական վիճակը: Իսկ վիճակը այսպիսին էր:

Մայիսի 28-ին իր անկախության մասին հայտարարած Հայաստանի Հանրապետության նոր ձևավորված կառավարության ուսերին ծանրանում են մեծ պատասխանատվություններ, որոնք էլ նա ձեռնամուխ է լինում լուծելու:

Թուրքիան և Ադրբեջանը զենք են մատակարարում Հայաստանի թուրքական գյուղերի բնակչությանը՝ նախապատրաստելով հայերի դեմ ապստամբության: Գորիի և Բաթումի կողմերում վրացիներն են գրոհում երկաթգծի վրա: Այս ամենին գումարվում են վրացական ու ղարաբաղյան դեպքերը:[1]

[1] Հայոց պատմություն, 9-րդ դասարան, Ե., տպարան «Մանմար», 2014:

Հայաստանը տառապում էր ոչ միայն պատերազմից, այլև եղեռնից փրկված անհամար գաղթականների առկայությունից, որոնց պետք էր կերակրել, ապաստան տալ:

Հեղինակը կարողանում է պատմական և քաղաքական իրադարձությունների գեղարվեստական պատկերը հյուսել ոչ միայն դիպաշարի, այլև իր հերոսների միջոցով:

Գլխավոր հերոսին՝ Հերյանին, հանդիպած մարդկանց պատմությունների միջոցով ընթերցողը ծանոթանում է երկրի ներքին վիճակին, ուր համատարած ավեր ու սով է: Ճանապարհները վտանգավոր են, քանի որ ամենուր զինված ավազակախմբեր են շրջում: Կռվողներ չկան, աշխատողներ չկան. ընտանիքները պահելու անհնարին թվացող աշխատանքը մնացել է կանանց ու ծերերի ուսերին:
Գրողը ցույց է տալիս Հայաստանի տառապագին մենակությունը, և ընթերցողի մոտ կասկած է առաջանում, թե երկիրը կկարողանա դուրս պրծնել ճգնաժամից: Հայաստանի մասին լիարժեք պատկերացում տալու համար հեղինակը նկարագրում է նաև հարևան երկրների վիճակը:

Երկարատև պատերազմը, նրան հաջորդող հեղափոխությունը տակնուվրա էին արել ոչ միայն երկրները: Սովն ու դաժանությունները փոխել էին մարդկանց, հանել կյանքի բնականոն հունից: Փոխվել էին մարդկային փոխհարաբերությունները. պատերազմի բերած աղետների պատճառով հավասարակշռված կյանքը դուրս էր եկել հունից և մարդուն դարձրել վախեցած ու մոլորված կենդանի, որից ամեն ինչ սպասելի է: Փորձությունների ժամանակ, ինչպիսին է պատերազմը, երկրորդական են դառնում բարոյական շատ արժեքներ, և բարոյականը, գեղեցիկն ու ճիշտը չեն կարողանում պայքարել չարության ու նախանձի դեմ: Փոխվել էին նաև հավերժ անփոփոխ թվացող հարաբերությունները երկրների միջև:

Ներկայացնելով տարածաշրջանի քաղաքական և ներքաղաքական վիճակը՝ գրողը կարողացել է ցույց տալ մեր հարևանների էությունը: Ընթերցողը տեսնում է թուրքի և նրանից չտարբերվող ադրբեջանի թաթարի գազանային էությունը, վրացիներին, որ հարմար պահին կարող են դանակը կոկորդիդ դնել, ցարական և բոլշևիկյան Ռուսաստանի հակահայկական, մեծապետական քաղաքականությունը, եվրոպական երկրների դավաճան քաղաքականությունը և, ամենակարևորը, բոլշևիկին, որը ոչնչով չի տարբերվում թուրքից:

Զարյանը ներկայացնում է երկրների և մարդկանց հարաբերություններում առաջացած քաոսը և այդ պատկերի վրա հյուսում իր ասելիքը. տեսնել ու ընթերցողին ցույց տալ հայի էությունը և ոգին, գտնել, թե որն է հային հայ պահող ուժը, ինչպես է հայ տեսակը կարողացել հաղթահարել նմանատիպ փորձությունները և անցնել ժամանակների փոթորիկների միջով ու հասնել մեր օրերը: Ահա այդ նպատակով էլ նա ներկայացնում է «մի քանի հայ հոգիների» պատմությունը, «որոնց վիճակված էր ապրել մեր ազգային կեանքի ամենաբախտորոշ շրջաններից մէկում»:

Շատ պարզ սյուժետային գիծ ընտրելով (Հերյանը նավը Բաթումից հասցնում է Քանաքեռի բարձունք)՝ Կ.Զարյանը ընթերցողին ծանոթացնում է Հայի հետ. դա կարող է լինել գուսան, գեղջուկ, քաղաքական գործիչ, զինվոր, արվեստագետ: Վեպի հերոսներից յուրաքանչյուրն ունի կյանքի իր փիլիսոփայությունը, և դրանք, վեպում մեկտեղվելով, դառնում են Հայի փիլիսոփայություն: Կյանքի ամենաբարդ ժամանակաշրջանում են ապրում այդ մարդիկ, երբ մի գաղափարախոսությունը փոխարինվում է մյուսով, երբ մի հայեցակետը կռիվ է տալիս մյուսի դեմ, և այս խառնիճաղանջության մեջ մարդը կորցնում է դիմակը ու ընթերցողի առաջ կանգնում իր իսկական դեմքով:

Վեպում կան հերոսներ, որոնք կարծես դուրս են գործողությունների միասնական կծիկից: Հայտնվում են, ինչ-որ բան ասում և կրկին անհետանում: Վերլուծելով գրական երկը՝ կարելի է կարծել, թե այս կերպարներն ավելորդ են, քանի որ նրանց ներկայությունը պատճառաբանված չէ. գործողություններին չեն մասնակցում, անհասկանալի է, թե ինչու են հայտնվում և անհետանում: Բայց եթե ստեղծագործությանը նայելու լինենք Կոստան Զարյանի նպատակդրման տեսանկյունից, ապա ամեն ինչ տեղն է ընկնում. այդ մարդիկ պետք է հայտնվեին ու իրենց խոսքն ասեին Հայի ու Հայաստանի մասին, որպեսզի գրողի խոսքն ամբողջանար:

Վեպում երևում է Հայաստան և հայ ժողովուրդ նույնացումը: Ժողովրդի ցավը երկրի ցավն է, ժողովրդի հավերժացումը երկրի հավերժացումն է: Հայաստանը մնում է, որովհետև վտանգի ժամին ժողովուրդը միշտ էլ կարողացել է գտնել իր հոգեկան դեմքը, որովհետև դեպի ապագա տանող ճանապարհը լուսավորող ճրագ ունի՝ հոգուց ճառագող, և ապրելու, դիմանալու, տանելու, պայքարելու իմաստություն:

Ընթերցողը տեսնում է, թե ինչպես է հայ մարդուն ընկալում Կոստան Զարյանը: Նրա համար հայը և՛ հայաստանցին է, և՛ օտար ափերում այս կամ այն պատճառով հայտնված հայը, որոնցից յուրաքանչյուրն ունի հայրենիքի իր ընկալումը: Եվ երբ նրանք ցանկանում են բացատրել, թե հայրենիքը ինչ է իրենց համար, միախառնվում են քրիստոնեությունը, լեռները, դաշտերն ու ձորերը, բնության տարերքները: Այդ տարօրինակ շաղախից էլ մեր առջև բացվում են Հայաստանը և հայ մարդու կենսափիլիսոփայությունը: «Ով է հայը» հարցին թերևս ամենադիպուկը պատասխանում է գլխավոր հերոսը. «Պնդակազմ, ժայռի նման մարդիկ են: Խոնարհ, յամառ, տխրութիւն տեսած դէմքեր: Նմանում են հայ հողին, առանց կեղծիքի, կարծր, պինդ, անմիջական: Նմանում են հայկական բնավայրերին՝ լերկ, լեցուն, խոր»(էջ 52): Պերոնյանը լրացնում է հայի մասին հնչող միտքը. «Հայ լինելը բարդ եւ դժուարին բան է… կարծում են պարզ անվանակոչութիւն է, վիճակ, պատահականութիւն… Հայ լինելը անողոք եւ հերոսական բան է: Ճակատագիր է եւ պատգամ… Այո՛, ա՛յդ: Մենք առաջապահներ ենք. Կեանքի սկզբից պայքարող լոյսի եւ խաւարի առաջապահներ, մեծ պատասխանատուութիւններով ծանրաբեռնուած»(էջ 418):

Վեպից իմանում ենք նաև, որ գոյություն ունի հայկական հոգու աշխարհագրություն, որը սահմանվում է «Սասունցի Դավթով». «Ազգային մեր դիւցազներգութիւնը երգել են տարբեր բարբառներով, բայց երգել են եւ ներշնչել են նոյն կենտրոնական մօտիւներով: Կարեւորը այդ է: Պօէմայի հերոսները ցեղի սրտում բարձրացրել են զօրեղ եւ տիրական նո՛յն ձայնը. ապրելու, պայքարելու, լաւագոյն եւ արդար մի աշխարհ ստեղծելու ձայնը: Ոգին եղել է ամէն տեղ նոյնը: // …Հայկական հոգեկան աշխարհագրութիւնը կարելի է սահմանել Սասունցի Դաւթով. ուր նրան երգել են՝ հայ է եւ ուր չեն երգել՝ գաղութ է»(էջ 163):

Շրջելով Հայաստանում՝ Կ.Զարյանը ցավով տեսնում է, որ հայ հոգին քնել է (կամ քնեցրել են), բայց հավատում է, որ «Վիշապաքաղների ժամանակը պիտի գա, և հայ ժողովուրդը թվյալ լինելու տեղ պիտի լինի: Ապրի համարձակորեն, լեցուն և ամբողջական կյանքով»[2]: Ճիշտ է, ողջ վեպի ընթացքում տարբեր հերոսների միջոցով հեղինակը բացահայտում է հայ հոգու էությունը, բայց հիմնական մտքերը այդ մասին արտահայտվում են Հերյանի, Պերոնյանի, Սուլթանյանի և Հայկ Շուշանի զրույցի ընթացքում: Խոսելով մեր ազգի յուրօրինակության և բացառիկության մասին, նրանք

[2] Զարյան Կ., Նավատոմար, Երևան, 1999, էջ 568:

ընդունում են, որ մենք զերծ չենք թերություններից, որոնք, ինչպես և առավելությունները, հետևանք են մեր պատմության և ապրած կյանքի: Բայց կարևորը գտնելն ու տեսնելն է «ցեղի հոգեկան կենտրոնում վառած այն անմար ճրագը, որ պատմութեան ընթացքին քօղարկուել էր թանձր մի գիշերով»(159): Հոգու այդ լույսն է հնարավորություն տվել մեր ժողովրդին վտանգների ժամանակ վերագտնելու «մեր իսկութիւնը, մեր միութիւնը, մեր հոգեկան դէմքը», որ պայքարեն լինելու համար: Հոգում ճառագող այդ լույսը գոյացել է նաև մեր լեռներից ու դաշտերից, այդ պատճառով էլ հայը, լքելով հայրենի լեռները, կորցնում է ինչ-որ կարևոր խորհուրդ, կիսատվում է առանց իր երկրի.

Գրողը կարծում է, որ մեր ցեղի հոգեկան միությունը պահում է լեզուն[3]: Լեզուն անհրաժեշտություն է: Հայը աղավաղվում է, երբ ուրիշ քաղաքակրթության մասնիկ է դառնում, մանավանդ երբ մոռանում է լեզուն, մինչդեռ լեզուն հայի կերպն է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Հեղինակի ասելիքը ընթերցողին հասցնում է Արա Հերյանը՝ վեպի գլխավոր հերոսը: Նա է կյանքի ճանապարհին հանդիպում այլևայլ մարդկանց, ունկնդրում նրանց, նրանց ասածներից և իր մտահանգումներից եզրակացություններ անում: Արտասահմանում հանդիպած մի հայ Հերյանին ասել էր. «Հայի սրտում երկիրը, հայրենիքը միայն անուշ հիշատակ չէ՝ այլ արիւնի հետ շրջող մի ոգեկանութիւն, առանց որի՝ աշխատանք, հարստութիւն, դիրք եւ փառք դառնում են անիմաստ»(էջ17): Գաղթականը գործողություններին չմասնակցող առաջին կերպարն է: Հերյանը առաջին անգամ նրանից է բարձրաձայն խոսք լսում իր հայրենիքի մասին, որը մինչ այդ քաղցր, բայց տարտամ մի զգացողություն էր՝ հեռավոր մանկության լեռնային գյուղի պատկերով: Հայրենիքի մասին Հերյանը ժամանակ չէր ունեցել մտածելու: Գաղթական հայի միջոցով կայանում է Հերյանի առաջին հանդիպումը Հայաստանին: Նա հասկանում է, որ հայրենիքը նախնիներից ժառանգած սեր և կարոտ է, որ հոսում է երակներով և անդարձ կապում նախնիների հողին: Գաղթականի խոսքերը բախտորոշ են դառնում Հերյանի համար. նա հասկանում է, որ մինչև չգտնի իր

[3] Ն.տ., էջ 588:

հայրենիքը, հոգու պարապությունը ոչնչով չի կարողանա լցնել: Մտածող, ինքն իրեն պրպտող անհատականությունը, ինչպիսին Հերյանն էր, չէր կարող ապրել հոգեկան երկվությամբ: Նա հասկանում է, որ սեփական անհատականության ամբողջականությունը հնարավոր է միայն հայրենիքի հետ միասնանալով: Միայն այդպես կկարողանա հոգեկան խաղաղություն գտնել: Որպեսզի նրա մեջ քնած զգացումները և մտքերը արթնանային, հզոր խթան էր պետք: Այդ խթանը հայրենիքի վիճակի մասին լուրերն էին, որոնք հասնում են Հերյանին:

Եվ արդեն անկարևոր է դառնում, թե ինչպիսին կլինի անհատականության՝ ամբողջական դառնալու ուղին, այն անցնելու համար ինչ փորձություններ անհրաժեշտ կլինի հաղթահարել, կամ ինչ զոհողություններ կպահանջվեն: Արա Հերյանի դեպքում հրաժարվելն էր ծովից, առանց որի չէր պատկերացնում կյանքը, սիրելի Դաշենկայից, որին կապված էր անքակտելի (նրան այդպես էր թվում) կապերով, քաղաքից, որը նրան ապաստան էր տվել և հարազատ դարձել… Նա ամեն ինչ թողնում է և անվարան նետվում դեպի անորոշություն, որտեղ ամեն ինչ մութ էր, անծանոթ, նույնիսկ վախեցնող:

Հերյանը չի վախենում կյանքի առաջադրած խնդիրներից: Նա հասկանում է, որ ավարտել է իր կյանքի մի շրջափուլը, և պատրաստ է սկսելու նորը: Հերյանն ուներ հոգու այն կորովը, կամքի այն ուժը, որը պետք է ունենա առաջ սլանալու պատրաստ, երազանք ու նպատակ ունեցող յուրաքանչյուր մարդ: Հայրենիքը, միտք դարձած, խուժում է նրա գիտակցություն: Միտք-հայրենիքը մարմին և էություն է դառնում և այլևս Հերյանի անբաժանելի մասը կազմում: Նա հասկանում է, որ հայրենիքը սպասում է ուժեղ մարդու: Խոսքը այն հզոր ու աստվածաստեղծ մարդու մասին է, որին հեղինակն անվանում է «Արարատյան» կամ «Էր» մարդ: Հերյանը նայում է հայ մարդկանց և զգում, որ հազար թելերով կապված է նրանց, որ նրանք հարազատ են իրեն:

Գնացքում, որով նա վերադառնում էր հայրենիք, մեկը իր կարծիքն է հայտնում հայի ու Հայաստանի մասին: Մատնացույց անելով անապատացած հողերը՝ նա ասում է. «Եթէ մարդ լաւ մտածի, էդ դժբախտ հողերը ճիշդ ու ճիշդ նմանում են մեր ազգին… կարծես բնութիւնը իր յուշատետրում ամէն ինչ արձանագրել է… նոյն ճակատագիրը, նոյն բախտը… մի լաւ նայեցէք. էդ հողերը, ինչպէս նաեւ մեր ազգը, տառապում են, որ չեն կարողանում տալ էն ամէնը, ինչ որ կարող են տալ…» (էջ 35):

Նախաստեղծ մարդու մտածելակերպն է ու վերաբերմունքը մայր հողի նկատմամբ, երբ հողը աստվածություն էր, և նրան երկրպագում էին: Ամլացած հողը հակաբնական է, իսկ այն, ինչ հակաբնական է, չի կարող գեղեցիկ լինել:

Հերյանը յուրացնում է երկրորդ դասը. ժողովուրդը և հողը անբաժանելի են և ունեն նույն ճակատագիրը: Մինչդեռ գնացքի պատահական ուղեկիցը շարունակում է իր դասը. «Ասում են Հայաստան եւ անցնում գնում… Չեն մտածում, որ էդ անունը, Հայաստան, էդ անունը, մի շատ ծանր բեռ է… շա՛տ է, շատ… Իսկ հայ լինե՞լը… Չարքաշ, քարտաշ, դժուարին մի վիճակ… Հայ լինելը, պարոն ջան, նշանակում է գործ ունենալ ժայռերի, քամիների, ցրտի, ձիւնի հետ…»(էջ 36): Հերյանը հետո պիտի հասկանար այդ ճշմարտությունը: Նա առայժմ լսում էր:

Գնացքի ուղևորները խոսում են Հայաստանի ապագայի մասին: Կարծիքները բաժանվում են. ուղևորների մեծ մասը կարծում է, որ երկիրն ու ժողովուրդը այնքան զոհ են տվել, տառապանք կրել, որ «Վիլսոնը խոստացել էր», իսկ մեծ պետությունների համար պատվի հարց է Հայաստանի փրկությունը: Այսպես հնչում է ժողովրդի՝ պաշտպանված լինելու երազանքը: Բայց սա նաև այն միտքն է, որը թուլացնում է մարդու ոգին և նրան պայքարելու համար անընդունակ դարձնում: Եվ անմիջապես էլ տրվում է սթափեցնող պատասխանը. «Քանի մեր արիւնին պէտք ունէին, խոստանում էին… Առաջին անգամը չէ որ Մեծ Պետութիւնները մեզ խաբում են»(էջ 36): Սա իմաստուն ժողովրդի եզրակացություն-դասն է, որը որպես զգուշացում հնչում է նաև մեզ համար:

Հերյանը լսում է հասարակ մարդկանց պատմությունները, որոնցում զրուցակիցները գնահատում են հարևան ժողովուրդներին. չկային բարեկամներ ու դաշնակիցներ:

Դեռևս Հայաստան չմտած՝ Հերյանը լսում է ժողովրդի ձայնը՝ սեփական ապագայի մասին մտահոգությամբ լի: Հասկանում է, որ այս տառապած ժողովուրդը մենակ է մնացել իր ցավի, իր դժբախտության, իր ուրախությունների հետ: Հասկանում է, որ ինքը պետք է իր երկրին, ինչպես և երկիրը պետք է իրեն, եթե ուզում է կիսատպռատությունը թոթափել իրենից:

Հերյանն անցել է իր նախորդ և ապագա կյանքերի սահմանագիծը: Նա աստիճանաբար հայտնաբերում է այն, հանուն ինչի պետք է ապրի: Սա շատ կարևոր է, որովհետև մարդ կարող է ամբողջ կյանքում փնտրել ու չգտնել այն հանունը, որով և

որի համար պետք է ապրի իր կյանքը: Հերյանը աստիճանաբար է հայտնաբերում այն, ինչը պետք է իր կյանքի բովանդակությունը դառնար: Առայժմ հեռվից: Շոշափելով: Հետո նա պետք է մխրճվեր բովանդակության մեջ, և այդ բովանդակությունը հետո պետք է դառնար նրա կյանքի իմաստը: Առայժմ միայն հանդիպումներ են, որոնք նախապատրաստում են նրան:

Օգտվելով գնացքի պարտադրված կանգառից՝ Հերյանն իջնում է, և այն, ինչ տեսնում է, մինչև հոգու խորքը ցնցում է նրան: Հերյանի և Հայաստանի երկար սպասված հանդիպումը կայացած է արդեն: Հերյանը իր երկիրը հասկանալու և բացահայտելու ճանապարհին է:

Երևանում Հերյանը տեսնում է միայն աղքատություն և խեղճություն, դատարկ խանութներ, կեղտ, սով, հենց փողոցներում՝ տների պատերի տակ, թափված գաղթականներ, որոնք քաղաքի համայնապատկերի մասն էին դարձել: Սովորական էին ամեն առավոտ դիակներ հավաքող սայլերը, մարդկանց աչքի առաջ դիակները մերկացնելը և նրանց ցնցոտիների համար կռիվներ սարքելը: Եթե ողբերգություններն ու դաժանությունները սովորական են դառնում, նշանակում է՝ մարդը կորցնում է իր մարդկայնությունը: Սակայն հանրապետությունը հերոսական աշխատանք էր կատարում. չնայած միջոցների բացակայությանը՝ կարողանում էր գաղթականների հարցերը քիչ-քիչ լուծել, պատերազմից ավերված քաղաքի փողոցներն ու տները նորոգել և միաժամանակ տարբեր ճակատներով պատերազմել թուրքերի, բոլշևիկների, քրդերի, մոլոկանների, ադրբեջանցիների և վրացիների դեմ: Թեև չկար ո՛չ զենք, ո՛չ հաց: Կյանքը սովորական հունից դուրս էր եկել և պարտադրել խաղի իր կանոնները:

Հեղինակն ամբողջացնում է պատերազմի մեջ գտնվող երկրի վիճակի նկարագրությունը նաև հակադրությունների միջոցով: Բարեկեցիկ կյանքով ապրողդասակարգը ակումբներում զվարճանում է՝ թղթախաղով և քեֆեր անելով սպանելով գիշերը, միլիոններ են տանուլ տալիս, մինչդեռ ակումբի մոտ սոված գաղթականները ողորմություն են խնդրում: Ապրելու համար այդ խուժանը կարող է նաև սպանել: Ընթերցողը տեսնում է պատերազմի մեջ ներքաշված Հայաստանի իրական դեմքը, և հարց է առաջանում՝ ո՞րն է հայ ոգին, ո՞ւր է այն. հարուստ թափթփուկների մե՞ջ, որոնք կեղծ հերոսներ են հորինում, թե՞ խուժանի մեջ, որ մի կտոր հացի համար պատրաստ է սպանել:

Հերյանը գիտակցում էր, որ հոգին հարստանում է միայն հայրենիքով: Նա հոգնել էր անխարիսխ նավի նման կյանքի ծովում թափառելուց. նա հարազատ ափի կարիքն էր զգում և հասկանում էր, որ միայն այդ դեպքում կգտնի «իր անհատականութեան միութիւնը». Նրա համար այժմ նշանակություն չուներ, թե ինչպիսի վիճակ է երկրում: Նա հավատացած էր, որ այդ խառնակ ժամանակներում կարող է ինչ-որ կերպ օգտակար լինել իր երկրին: Լինելով ծովի մարդ և սիրահարված լինելով ծովին՝ նա հույս էր փայփայում, որ միգուցե կարողանա իր հոգուն հարազատ աշխատանք գտնել: Աշխատանքի տեղավորման կենտրոնում լսում է Սևանի մասին և ցանկանում է տեղում ծանոթանալ իրավիճակին: Սևան մեկնելը ճակատագրական է դառնում նրա համար. նա հայտնաբերում է իրական, ոչ երազային հայրենիքը:

Թե ինչ է Հայաստանը, վեպում շատերն են կարծիք հայտնում: Այդ բոլոր կարծիքներն ու մտքերը պատումի ընթացքում մեկտեղվում են և ընթերցողի համար բացահայտում Հայաստան-էությունը: Այս առումով անհրաժեշտություն էր Արա Հերյանի և Պետրոս Մարկի հանդիպումը:

ՊԵՏՐՈՍ ՄԱՐԿ

Հետաքրքիր, նույնիսկ տարօրինակ կերպար է Մարկը: Ի տարբերություն Արա Հերյանի՝ նա քաջ գիտակցում է իր լինելության խորհուրդը Վեպում չի կարևորվում, թե Պետրոս Մարկը ինչով էր զբաղվում մինչև Հայաստան գալը: Կարևորվում է այլ հանգամանք. նա Հնդկաստանից էր և իր մեջ կրում էր Արևելքի փիլիսոփայությունը, Արևելքի մարդու աշխարհընկալումը՝ բոլորովին տարբեր եվրոպացուց:

Մարկի հետ զրույցից հետո են բացվում նավապետի հոգու աչքերը: Պետրոս Մարկը կարծում է, որ յուրաքանչյուր ժողովուրդ ունի իր նկարագիրը, որը ձևավորվում է դարերի ընթացքում ձեռք բերած կարողությունների շնորհիվ և արտաքին պայմանների դրական կամ բացասական ազդեցություններից: Այդ նկարագիրը ժողովրդի էությունն է, մնայուն արժեք, որը որպես ճրագ լուսավորում և ուղղորդում է նրա ճանապարհը: Ժողովուրդը պետք է հետևի իր էությունից բխող լույսին՝ չշեղվելով և չդավաճանելով նրան: Մարկը շրջել էր հեգեվարքի մեջ գտնվող Հայաստանում, տեսել գյուղեր, քաղաքներ ու շեներ, նայել ու հասկացել էր՝ մեր ժողովուրդը կորցրել է ոգեղենը, որը խորհրդանշում է դեպի ապագա գնացող ժողովրդի ուղին և պահում է ժողովրդի միասնականությունը:

Պետրոս Մարկը ցավով տեսնում է, որ ժողովուրդը վատնել է ավանդույթները, մոռացել ավանդությունները, որոնք հոգու և էության արտահայտությունն են: Նա համեմատում է մեր երկիրը Արևմուտքի եկրների հետ. այնտեղ տարածությունը ժողովրդի համար չեզոք մի վայր է, նյութ: Մեր երկիրը պատկանում է «Սրբազան աշխարհագրության», ուր ամեն ինչ պատճառաբանված է՝ ամեն խոսք, շարժում, գործողություն, քանի որ երկիրն ու մարդը հոգեկան միասնություն են կազմել: Ընթերցողը Պետրոս Մարկի միջոցով լսում է հեղինակի կարևորագույն միտքը՝ երբ մեր ժողովուրդը իր երկրի հետ միասնություն էր կազմում, նրա հոգին լուսավորվում էր երկրից բխող լույսով, նա արարում էր տաճարներ, որոնք ցույց են տալիս երկրի ու անձի համադրությունը, առանց որի չի կարող իսկական կյանք լինել: Այժմ այդ հուշարձանները ցույց են տալիս ընդամենը ձգտում, հոգեկան նախադրյալ: Իսկական կյանք ասելով՝ հեղինակը հասկանում է հոգևոր և մշակութային այն կյանքը, որ ունեցել է մեր ժողովուրդը Բայց նա տեսել էր վիրավոր տաճարներում ամփոփված Լույսը՝ մեր ժողովրդի՝ երկար դարերի տքնանքի և պայքարի արդյունքը: Մարկը

Սևանի հինավուրց վանքում կրկին տեսնում է Լույսը, իսկ երբ եկեղեցում հանդիպում է նաև Հերյանին, հասկանում է, որ իր առաջ կանգնած է այն նվիրյալը, որին ինքը փնտրում էր: Նա աշխատում է Հերյանին բացատրել. որպեսզի Լույսը լուսավորի ժողովրդին, անհրաժեշտ են նվիրյալներ, որոնք կկարողանան նորից մատնանշել ժողովրդի կորցրած ճանապարհը, այլապես ժողովուրդը դատապարտված է: Պետրոս Մարկի առաքելությունը Հերյան-տեսակին գտնելը և Լույսի խորհուրդը նրան հասցնելն է, իսկ Հերյանի առաքելությունը ժողովրդի առջևից գնալն է՝ Լույսը ջահ դարձրած:

Այս հնդկահայը փիլիսոփա է և ուսուցանող, ոչ մարտիկ, այդ պատճառով էլ չի կարող իր ուսերին վերցնել այն առաքելությունը, որի անհրաժեշտությունը գիտակցում է, բայց նաև գիտի, որ չի կարող իրականացնել: Նա այն միջոցն է, որով կարևորագույն միտքը Հերյան-տեսակին պետք է հասներ:

Կարելի է եզրակացնել, որ Կ.Զարյանը նավապետ Հերյանի մեջ տեսնում է ապագայի հերոսամարդու նախադրյալները:

Պետրոս Մարկի հետաքրքիր մտածելակերպը զարմացնում է Հերյանին: Ըստ Մարկի՝ մեր ժողովուրդը հայտնվել է անելանելի վիճակում, և դրա համար բոլորովին էլ պետք չէ մեղադրել պատմությունը կամ արտաքին պայմանները: Մեր գլխին թափվող դժբախտությունները մի բացատրություն ունեն միայն. մենք թուլանում, հոգով անզորանում ենք, շեղվում մեր ճանապարհից և դրանով իսկ պայմաններ ենք ստեղծում, որ դժբախտությունները մեկը մյուսի հետևից թափվեն մեր գլխին: Երբ չկա հոգեկան միասնություն, չկա միասնական նպատակ, հնարավոր չէ քայլել միևնույն ճանապարհով: Սա մեր դժբախտությունների և ողբերգությունների պատճառների բոլորովին նոր բացատրություն էր:

Սևանի կղզում Զվարթի հետ զրուցելիս Հերյանը, միգուցե Պետրոս Մարկի զրույցից տպավորված, հետաքրքիր միտք է արտահայտում, որ Լուսավորչից առաջ ապրած հին աստվածները դեռ կան և մասնակցում են մեր կյանքին, չնայած մենք դա չենք գիտակցում: Նրանց գոյությունը երևում է առասպելներում, որոնց մեջ ամփոփված իրականը ժողովուրդն այլևս չի ընկալում: Հերյանը ցավով է այս փաստը նշում, քանի որ հին աստվածներին մոռանալը սեփական ինքնության կարևորագույն մասից հրաժարվել է նշանակում: Իսկ այն, որ ապագան կերտելիս չի կարելի անցյալից հրաժարվել, գրողը հասկացնում է հինավուրց եկեղեցու խորհրդով: Այն

կառուցվել է «կռապաշտական մեհեանի հիմքերի վրայ»: Դաժան ժամանակները մեծ պետություններ ու ժողովուրդներ են փոշիացրել, մինչդեռ «անխնամ, որբ, թշւառ» եկեղեցին կանգուն է: Նրա տանիքը ծռված է, շաղախը՝ թափված, դռներն պատուհանները՝ քանդված, բայց ներսում մի քանի մոմ է բոցկլտում: Պատերին գրքերը կրծքերին սեղմած սրբերի պատկերներ կային, որոնք մոմի թրթռացող լույսից կենդանացել էին: Այդ հին եկեղեցին հայ ժողովրդին է խորհրդանշում՝ ժամանակի փոթորիկներին ճակատը դեմ տված, գոյության համար պայքարող և մշակույթ արարող:

Հերյանի հետ զրույցում Պետրոս Մարկը զգուշացնում է, որ ժողովուրդը պիտի կարողանա գիտակցել սեփական կեցության խորհուրդը, որովհետև հենց այդ գիտակցումն է ապահովում ժողովրդի միասնությունը. առանց միասնության կործանումն անխուսափելի է:

Պետրոս Մարկի և Հերյանի հանդիպման ժամանակ հասկանում ենք, թե ինչ մեծ առաքելություն է ծանրացած հերյանների ուսերին՝ հետ բերել հույսը, լուսավորել և ցույց տալ ապագայի ճանապարհը:

ԱՐԱ ՀԵՐՅԱՆ

Հերյանը Հայաստան էր եկել արյան կանչով, հասկանալով, որ երկիրն իր կարիքն ունի: Թե ինչպես պիտի օգտակար լիներ, դեռ չէր գիտակցում մինչև Սևանը տեսնելը և Միշա Թումանյանի հետ հանդիպելը: Դրանից հետո որոշումը նա արագ է կայացնում. Սևանին նավ է պետք, և այդ նավը ինքը կբերի Բաթումից: Նրա երազանքը, ցանկությունը և համառությունը տարօրինակ էին թվում բոլորին, քանի որ երկիրը պատերազմի մեջ էր, ժողովուրդը աղքատ էր ու սոված, հոգնած միմյանց հաջորդող պատերազմներից. պետք էր մտածել ներկայի մասին, ոչ թե հեռու ու մշուշոտ ապագայի: Հերյանին ոգևորում էր իր ներքին համոզվածությունը:

Վերջապես Հերյանը կարողանում է մեկնել Բաթում: Հին կյանքի հիշողությունը հուզմունքի ալիք է բարձրացնում նրա հոգում, և երկու սիրելի դեմքեր են պատկերվում նրա առաջ՝ Դաշենկան և Զվարթը: Հերյանի անկեղծ զգացմունք էր տածում երկուսի նկատմամբ. առաջինը հին կյանքը, հին սերերն ու երազանքներն էր խորհրդանշում, երկրորդը՝ այն հայրենիքը, որը նոր-նոր էր հայտնաբերել իր համար: Հեղինակը հետաքրքիր հոգեբանական բացահայտումներ է անում: Երբ մարդը ապրում է՝ տրվելով միայն պահին, հաճախ ժամանակ ու հնարավորություն չի ունենում նայելու իր ներսը, լսելու սրտի կանչը և գտնելու իրական ուղին: Եթե դեպքերի ընթացքը ճիշտ չդասավորվի, հնարավոր է, որ մարդը նույնիսկ չհասկանա՝ ճիշտ է ապրում արդյոք: Հերյանի բախտը բերել էր: Նա կարողացել էր լսել սրտի ձայնը և ժամանակին ճիշտ շրջադարձ էր կատարել՝ վերադառնալով հայրենիք: Այդ բանը նա հասկանում է, երբ կրկին Բաթումում էր: Քաղաքը որ ժամանակին հարազատ էր թվում, այլևս օտար էր. ապրած կյանքը հեռացել էր, ներքին կապը՝ խզվել. «… ծովն իսկ, իր հին նաֆտատարն իսկ, այլևս իր մէջ չէին արթնացնում սարսռուն եւ գունաւոր այն պատկերները, որոնց աշխարհում ժամանակին նա սիրում էր ապրել»(124): Հին սերերը դժվար է մոռանալ, բայց երբ Հերյանը գիշերով տեսնում է հարբած Դաշենկային երկու տղամարդկանց հետ, հասկանում է, որ ընդմիշտ կորցրել է նրան, նրա հետ էլ անցյալ է դառնում նախկին կյանքը:

Անհաղթահարելի թվացող բազմաթիվ դժվարություններ հաղթահարելով՝ Հերյանը կարողանում է նավը Բաթումից բերել Երևան և հասցնել մինչև Քանաքեռի բարձունք: Վեպի վերլուծաբանները տարբեր կարծիք են հայտնում «նավ»

խորհրդանիշի մասին: Դ.Գասպարյանը, օրինակ, կարծում է, որ «Նավն այստեղ Հայաստանի ազատության խորհրդանշանն է, իսկ լեռը՝ երկրի: …Նավը լեռան վրա բարձրացնելով՝ Կ.Զարյանը իր ժողովրդի պատմական գոյության նոր սկիզբն է ավետում»:[4] Վ.Գաբրիելյանը կարծում է, որ «նավ»-ը ազատ երկրի, այսինքն՝ նոր պետության խորհրդանիշն է. ««Նավը տեղ հասցնել»: Սա Հերյանի ներքին ձայնն է, որ կոնկրետություն է ստանում հետագայում (Վ.Գաբրիելյանը նկատի ունի խմբագրված տարբերակի ավելացված հատվածը, Հ.Ա.)»:[5]«Եվ նավը մնում է մեխված Քանաքեռի բարձունքին, որպես չիրականացած իղձերի մի խորհրդանիշ»:[6] «Վեպում նավը մի տարողունակ սիմվոլ է՝ Հայաստան աշխարհի ազատության մարմնացումը, որն անընդհատ փրկության սուլոցներ է հնչեցնում՝ ուղղված համայն հայությանը»[7],- գրում է Ա.Ավագյանը: Հետաքրքիր է Ա.Ավագյանի մեկ այլ բացատրություն. «Վեպի ողջ ընթացքը և ավարտը (առաջին բնագիրը) ցույց են տալիս, որ Զարյանը, հանձին այդ նավ-սիմվոլի, մարմնավորել է հայ կյանքի սնանկությունն ու փլուզումը: Սակայն նավը միայն Հայաստան աշխարհի ու նրա ոգու սիմվոլը չէ: Այն նաև Հերյանի կյանքի ներքին իմաստի կրողն է, ինքը՝ Հերյանը»:[8]

Գրքի վերնագիրը՝ «Նավը լեռան վրա», հուշում է, որ նավը Հայաստանն է: Այս մտքին գրողն անդրադառնում է տարբեր ստեղծագործություններում: Բերենք ընդամենը երկու օրինակ.

Օրերի բուքում մաքառող խօլ նաւ –
Օ՜, իմ հայրենիք –
Ես թափառել եմ՝ քո լոյսով ծարաւ,
Ծարաւ տեսիլքիդ պատկերով հրատապ…[9]

Դարերի ձեռքով, աստղերի լոյսով,
Խաւարի դիզած փոթորիկներով,
Գրուած է միրաժ բառը՝ Հայաստան,

---

[4] Գասպարյան Դ., Հայ գրականություն, Ե., 2000, էջ112:
[5] Գաբրիելյան Վ., Դիմանկարներ, Ե., 1976, էջ 71:
[6] Նույն տեղում, էջ 72:
[7] Ավագյան Ա., Հավատի և հույսի նավը, «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 3, էջ 23:
[8] Ավագյան Ա., Խորհրդապաշտական արձարձումները Կ.Զարյանի ստեղծագործություններում, «Բանբեր Երևանի համալսարսնի», հ.2.էջ 81:
[9] Զարեան Կ., Իմ հայրենիք, «Նայիրի», 1948, յունիս, հ.5, էջ 364:

Եւ բառի ետեւ՝

Հիւսիս եւ հարաւ՝

Մեծղի մի արեւ,

Յոյզերի ծովում ընկղմող մի նաւ:[10]

Նավ՝ Հայաստան՝ հայության փրկության տապան, և լեռ՝ վեհացում, խորհրդանշանների զուգադրումն է գրողը մատուցում վեպում. որպեսզի Հայաստանը ապրի և գոյատևի, պետք է վեր լինի նյութականացումից, դեպի ուր գնում է ժամանակակից աշխարհը: Խորհրդային գրաքննիչների վերլուծականներում «պետություն» և «հայրենիք» հասկացությունների միջև հավասարության նշան է դրվել, որը չի ընդունում Կոստան Զարյանը. վեպում տեսնում ենք «հայրենիք» և «ազգ» ամբողջությունը: Պետությունը հայրենիք չէ և ազգ չի ձևավորում: Ազգը բարձր է պետությունից: Պետության տեսակները միմյանց են հաջորդել մեր ժողովրդի պատմության ընթացքում, բայց հայրենիքն ու ազգը նույնն են մնացել, նույնն է մնացել նաև ժողովրդի վերաբերմունքը իր երկրի նկատմամբ: Հենց այս պատճառով էլ Խորհրդային Հայաստանը, որը պետականության հերթական ձևն էր, չէր կարող փրկության տապան դառնալ հայության համար:

Արա Հերյանը ուժեղ, կամային անհատականություն է: Նա կարողացավ մի կողմ դնել անձնականը, հասկանալ, որ կա միայն մեկ ճշմարտություն և մեկ գաղափարախոսություն՝ հայրենիքը, որին պետք է նվիրվել ամբողջովին՝ չակնկալելով ոչինչ: Արա Հերյանի մեջ հեղինակը տեսնում է այն անհատին, որից ապագայում կազմված պիտի լինի մեր հասարակությունը:

Հերյանը հեռանում է քաղաքից և ապրում թափառականի կյանքով: Հանրապետության անկումը, բոլշևիկների մուտքը, ապստամբությունը և հանրապետությունը վերականգնելու փորձը, քաղաքացիական կռիվները, որոնք անիմաստ զոհերի պատճառ էին դառնում, երկրի վիճակի անորոշությունը… Հերյանին շփոթեցրել էին: Նա ցանկացել էր իրեն նվիրել հայրենիքին: Նա գիտեր մի հայրենիք, որի անունն էր Հայաստան, և այդ Հայաստանը նրա համար լեռների, դաշտերի, ժողովրդի ու մշակույթի ամբողջությունն էր: Բայց այժմ նրա տեսած, նրա երազած ու սպասած ամբողջությունը մասնատվել էր, և Հերյանը կորցրել էր իրեն, կորցրել էր իր գոյության իմաստը: Իրեն վերագտնելու ներքին մղումը նրան տանում է

[10] Զարեան Կ., Ես կա՛մ, կը մնա՛մ, «Նայիրի», 1948, մարտ, հ.2, էջ 93:

դեպի Արարատ, որը յուրաքանչյուր հայի էության խորհուրդն է: Տրեխներով, մաշված ու ծակված կարտուզով, երկարած մազերով, չսափրված, այրված դեմքով նա շրջում էր գյուղերով. «Նմանում էր լեռների, ժայռերի միջից դուրս եկած խորհրդավոր մի ոգու: Վրայից չորացած խոտի, յարդի, թրիքի եւ քացախած քրտինքի հոտ էր գալիս: Ձեռքերը կոպիտ էին և ծանր, այտերը ներս էին ընկել և աչքերը փայլում էին բոսորէ ճրագի նման: Երբ իրեն տեսաւ՝ ո՞վ է նա, հարցրեց ինքը իրեն: Ճակատից պաղ քրտինքի կաթիլներ վազեցին: Շօշափեց իր մարմինը, երեսը, մօրուքը՝ կասկած չկար, ինքն էր: Ա՛յն ինքն էր, որի մասին նա լսել էր: Ա՛յն ինքն էր, որին քարերը, լեռները, ձյունը եւ բուքը նւաճել էին, միացրել իրենց, կերպարանափոխել»(էջ 543): Հերյանի թափառումները նրան քաղաքակրթության աղավաղումից մաքրելու համար էին: Հերյանը թափառումների շնորհիվ վերագտնում է իր փնտրած ինքնությունը: Վերջապես իրականանում է Արա Հերյանի երազանքը՝ ամբողջանալ իր երկրի հետ. «Ասել էր հայը. – Ես կամ, կը մնամ: Ես քար եմ, ձիւն եմ, ժայռ եմ եւ մրրիկ»:[11] Միգուցե շատերի մոտ հարց առաջանա, թե ինչու Հերյանին պիտի խանգարեր քաղաքակրթությունը: Այս հարցի պատասխանը գրքում կա. Աբովյանի օրինակով. «Մի Աբովեանի մեծութիւնը հէնց դրա մէջն է: Երբ նա Գերմանիայից վերադարձաւ իր ժողովրդի ծոցը՝ դեն նետեց ամբողջ իր հսկայական կուլտուրական պաշարը, իր մտքի նրբութիւնները եւ, մերկացած, մօտեցաւ ժողովուրդին եւ խօսեց նրան այդ ժողովրդի բերանից առած կոշտ ու կոպիտ բառերով: Ո՛չ մի կեղծիք , ո՛չ մի սուտ, ո՛չ մի աւելորդ զարդ: Եւ ստեղծեց հրաշալի գրական գործեր. հիմնական եւ անհրաժեշտ… աղքատ գիւղացին իր արտի վրայ վարդենիներ չի տնկում, այլ ցորեն է ցանում…»(16):

Ինչպես տեսնում ենք, Կ.Զարյանը կարողացել է, պարզ դիպաշար ընտրելով, վեպում արծարծել այնպիսի հարցեր, որոնք արդիական են նաև հիմա և շատ երկար կպահպանեն իրենց արդիականությունը:

[11] Զարեան Կ., «Ես կա՛մ, կը մնա՛մ», «Նայիրի», 1948, մարտ, հ.2, էջ 96:

ԳԼՈՒԽ 2. «Նավը լեռան վրա» վեպի դասավանդման մեթոդներ

Առանց ժամանակաշրջանը պատկերացնելու՝ հնարավոր չէ պատմական հիմքի վրա կառուցված վեպը հասկանալ, ընկալել գրողի մտադրությունը, հերոսների վարքագիծը և, ի վերջո, մեկնաբանել ստեղծագործության գաղափարը:

Ուստի շատ կարևոր է վեպի բովանդակությանը ձեռնամուխ լինելուց առաջ նախ պարզել, թե աշակերտները ինչ գիտեն կամ ինչ են հիշում 20-րդ դարասկզբի Հայաստանի պատմաքաղաքական վիճակից:

Առաջին դաս

Առաջարկում եմ դասի մուտքին տրամադրել 15 րոպե՝ կիրառելով «մտագրոհ» մեթոդը, որի ընթացքում ուսուցիչը ճիշտ ձևակերպված հարցադրումների միջոցով երկու նպատակ կիրագործի՝

1. Կպարզի աշակերտների գիտելիքները
2. Աշակերտներին կօգնի մուտք գործել «Նավը լեռան վրա» վեպի մթնոլորտ:

Կապահովվեն միջառարկայական կապերը պատմության և աշխարհագրության հետ: Կարելի է մոտավորապես այսպիսի հարցեր ձևակերպել՝

1. Թվե՛ք Արևելյան Հայաստանի սահմանակից երկրները:
2. 20-դ դարասկզբին ի՞նչ ժողովուրդներ էին ապրում Արևելյան Հայաստանի տարածքում
3. Ի՞նչ դեպքեր են տեղի ունենում 20-րդ դարի 20-ականներին Ռուսաստանում, արդյոք դա որևէ կերպ ազդե՞լ է Հայաստանի վրա:
4. Քաղաքական ինչպիսի՞ վիճակ էր Վրաստանում և Ադրբեջանում:
5. Ի՞նչ գիտեք Հայաստանի Առաջին Հանրապետության մասին:
6. Ինչպիսի՞ն էր Հայաստանի Առաջին Հանրապետության տնտեսական և սոցիալական վիճակը և այլն:

Սրանից հետո միայն կարելի է շատ կարճ ներկայացնել վեպի բովանդակությունը՝ շեշտադրելով գլխավոր հերոսի գործողությունների դրդապատճառները:

Երկրորդ դաս

Երբ աշակերտները հաղթահարեն վեպի բովանդակությունը, անհրաժեշտ կլինի նրանց ուշադրությունը բևեռել այն արժեքների վրա, որոնք կարևորում է Կոստան Զարյանը: Սա կօգնի մեկնաբանել վեպի գաղափարը: Դրա համար առաջարկում եմ կիրառել «Հասկացությունների աղյուսակ» մեթոդը.

	Արժեքներ	Դրսևորումները վեպում
1	Հայրենասիրություն	Արա Հերյանի վերադարձը Հայաստան Պատերազմի մեջ գտնվող երկրի համար վրաստանից նավ բերելը…
2.	Նվիրում	Բաբկեն Միրանյանի և Միշա Թումանյանի կերպարները
3	Աշխատանք	Հայ մարդու կարծիքը իր երկրի մասին
4	Միասնություն	Հիշել Սևանա վանքի մոտ շուրջպարը

Եվ այլն…

«Հասկացությունների աղյուսակը» կնպաստի, որ սովորողների եզրակացությունները համակարգված հանդես գան: Այս մեթոդի միջոցով կարելի է ոչ միայն համեմատել, այլ նաև հակադրել եզրահանգումները, հնարավորություն տալ աշակերտին հիշելու վեպի բովանդակության կարևոր դրվագները: «Հասկացությունների աղյուսակ » մեթոդի կիրառմանը, կարծում եմ, կբավարարի 10-15 րոպեն, որից հետո կարելի է անցնել վեպի գաղափարի մեկնաբանմանը:

Երրորդ դաս

Կերպարները բնութագրելու համար նպատակահարմար եմ գտնում կիրառել «դեբատ» մեթոդը: պետք է ձևավորել երկու խումբ, կարելի է նույնիսկ դասարանը երկու մասի բաժանել, որի ընթացքում հակառակորդ խմբերը կներկայացնեն փաստարկներ, իրենց տեսակետները, կպատասխանեն հակափաստարկներին, կապացուցեն իրենց պնդումների ճշմարտացիությունը: Այս աշխատանքը կազմակերպելու համար կարևոր է ճիշտ դերաբաշխում կատարել՝ բանավեճը վարող, բանավիճող, հարցեր տվող, բանախոս, հակափաստարկներ ներկայացնող և ամփումը կատարող: Շատ կարևոր է գնահահատողների խմբի առկայությունը:

«Դեբատ» մեթոդի կիրառումը նպաստում է սովորողների վերլուծական մտքի զարգացմանը, ինքնուրույն աշխատանք կատարելուն, ինքնագնահատականի բարձրացմանը:

Չորրորդ դաս

Կցանկանայի կանգ առնել վերջին՝ ամփոփիչ դասաժամի վրա: Վեպի բովանդակության իմացությունը, կերպարների բնութագրումը, վեպի գաղափարի մեկնաբանությունը պետք է ծառայեն մի նպատակի. աշակերտը պետք է հասկանա, թե ինչ տվեց իրեն այս ստեղծագործության վրա աշխատելը: Այդ պատճառով նպատակահարմար եմ գտնում քառաբաժան մեթոդի կիրառումը:

1. Ի՞նչ զգայություններ ունեցաք վեպը կարդալիս ♦տեսողական ♦զգացողական	2. Ինչպիսի՞ վերաբերմունք դրսևորվեց ♦հույզեր ♦զգացմունքներ
3. Վեպի արդիականությունը ♦ի՞նչ է փոխվել 100 տարի հետո ♦ի՞նչը կփոխեիք երկրի կյանքում	4. Ընդհանրացումներ ♦Ի՞նչ հասկացաք ♦ի՞նչը վերահիմաստավորվեց երկրի նկատմամբ ձեր վերաբերմունքի մեջ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կոստան Զարյանի «Նավը լեռան վրա» վեպն ուսումնասիրելիս պետք է սովորողներին ուղղորդել կարդալու 1943 թվականի բոստոնյան հրատարակությունը, որը նույնությամբ վերահրատարակվել է 2015 թվականին Երևանում (արևելահայերեն ուղղագրությամբ): 1963 թվականի երևանյան հրատարակությունը խմբագրված տարբերակ է՝ իմաստային և ոճական փոփոխություններով. Զարյանի նպատակադրումը ամբողջովին աղավաղված է այդ հրատարակության մեջ:

«Նավը լեռան վրա» վեպը պատմական վեպ չէ, բայց գործողությունները հյուսված են պատմական հենքի վրա, ուստի, վեպը ոչ միայն պատմությունն է մի քանի հայ հոգիների, ինչպես գրողն է ասում վեպի առաջաբանում, այլև հնարավորություն է տալիս 20-րդ դարի 20-ական թվականների Հայաստանի պատմական, քաղաքական, սոցիալական վիճակը պատկերացնել:

Կոստան Զարյանը՝ որպես հոգեբան, կարողանում է թափանցել մարդկային էության խորքերը և մեկ-երկու վրձնահարվածով կերտել կերպարներ, որոնք ընթերցողի համար ճանաչելի են դարձնում և՛ ժամանակաշրջանը, և՛ այն հասարակությունը, որի անդամն են, ուստի կերպարների բնութագիրը կօգնի հասկանալ վեպի գաղափարը:

Զարյանի նկարագրած իրականության մեջ է դրսևորվում նրա աշխարհայացքը. մեր ժողովուրդը ոգու և մտահայեցության յուրահատուկ ամբողջություն է, որը ծնվել է երկրի և ժողովրդի միասնությունից, դարերի ընթացքում մշակույթի, կրոնի, ավանդույթների շնորհիվ ձևավորված միայն այս ժողովրդին հատուկ գաղափարաբանությունից: Եվ, ամենակարևորը, մենք, ըստ Զարյանի, մշակութային ազգ ենք: Մեր ժողովրդի յուրաքանչյուր անդամ այդ մշակույթի և ազգային մտահայեցության կրողն է:

Այսպիսով, եթե վեպի դասավանդումը ճիշտ կազմակերպվի, ուսուցիչը կկարողանա

♦սովորողների մեջ հայրենասիրություն դաստիարակելու մի հնարավորություն ևս օգտագործել,

♦կկարողանա երեխաների մեջ ներարկել այն կարևոր միտքը, որ երկիրն ու ժողովուրդը անքակտելի միասնություն են. առանց իր երկրի հայը չի կարող ապրել, առանց իր ժողովրդի երկիրը կվերածվի սոսկ աշխարհագրական միավորի:

♦սովորողները կհասկանան, որ ամեաանելանելի վիճակից էլ (որում գտնվում էր մեր երկիրը վեպում նկարագրվող ժամանակահատվածում) կարելի է ելք գտնել, միայն դրա համար պետք է հայրենասիրություն, նվիրում, աշխատանք:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զարեան Կ., Նաւը լերան վրայ, Բոստոն, տպարան «Հայրենիք», 1943, 549 էջ
2. Զարյան Կ., Նավը լեռան վրա, Երևան, «Հայպետհրատ», 1963, 643 էջ
3. Զարյան Կ., Նավատոմար, Երևան, «Սարգիս Խաչենց» հրատարակչություն, 1999, 590 էջ
4. Զարեան Կ., Ես կա՛մ, կը մնա՛մ, «Նայիրի», 1948, մարտ, հ.2,
5. Զարեան Կ., Իմ հայրենիք, «Նայիրի», 1948, յունիս, հ.5
6. Գաբրիելյան Վ., Դիմանկարներ, Երևան, «Սովետական գրող» հրատարակչություն, 1976, 202 էջ
7. Գասպարյան Դ., Հայ գրականություն, Երևան, «Զանգակ-97» հրատարակչություն, 2000, 342 էջ
8. Ավագյան Ա., Խորհրդապաշտական արծարծումները Կ. Զարյանի ստեղծագործություններում, «Բանբեր Երևանի համալսարանի», հ.2, 1996
9. Ավագյան Ա., Հավատի և հույսի նավը, «Բանբեր Երևանի համալսարանի», հ. 3, 1996